

LGN

✓ 1033

1999



ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՍՈՒՐԱԲԱՅԱ



ՄԱՐՍԷՅԼ

ՀԱՅՆԵՐԷՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

MARSEILLE

IMPRIM. ET PAPETERIE DU MIDI, M. SCHICKLER

44, Allées de Meilhan, 44

1892

1368

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

## ՆՊԱՏԱԿ

Միաբանութեանս նպատակն է ըստ նիւթական և ըստ բարոյական կարողութեանցն իւր այնպիսի ազգօգուտ գործս յառաջացուցանել կամ նպաստել ի նոյն՝ որք վերաբերին Հայրենեաց ազատագրութեան:

## ՄԻՋՈՑԻ ՆՊԱՏԱԿԻ

Միաբանութիւնս ունիցի ընթերցարան մի՝ ուր գտանիցին ազգային լրաթուղթք որով մտրթ է լիովին տեղեկութիւնս ունիլ ի մասին ազգայնոցս և Հայրենեաց :

Կարէ Միաբանութիւնս որոք ժամանակ ազգօգուտ գործոց առթիւ ի ձեռս շրջաբերականի գումար հանգանակել առ ի հոգալ կամ առաքել ի նպաստ այդոցիկ գործոց, առ որս Միաբանութեան գանձանակն եւս կարէ նպաստել ըստ կարեացն իւր :

Միաբանութիւնն կարէ թղթակցել ընդ ազգային ա՛յլ Միաբանութեանց թէ՛ յօգուտ և թէ՛ ի յառաջացումն Միաբանութեան նպատակին :

Հ. Բ. 1033 41033-ա

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1. Վարչութիւն Միաբանութեանս կազմի ի հետեւեալ անձանց . այսինքն՝ ի Նախագահէ, ի Գանձապահէ, ի Քարտուղարէ և յերկու խորհրդատուաց, որք ի միասին կոչին վարչական ժողով : Այսօրքիկ պաշտօնակալք ընտրելի են յընդհանուր ժողովի Միաբանութեանն միամեայ պայմանաժամով, սակայն կարեն վերընտրելի լինիլ :

2. Վարչական ժողովն կատարէ գործողութիւնս յարմար դատեալ վասն յառաջադիմութեան Միաբանութեանն, խորհի զմիջոցաց առ ի յաւելուլ զեկամուտս Միաբանութեան և հոգ տանի ամենայն առաջարկաց և խորհրդածութեանց զորս ժողով Միաբանութեանն համաձայնութեամբ որոշիցէ կամ սահմանիցէ :

3. Վարչական ժողովն ներկայացուցանելոց է Միաբանութեան ժողովոյն զտեղեկագիր գործառնութեանց և զհաշուետումարս իւր մի անգամ ի վեց ամսոյ և եթէ հարկաւոր համարիցի, ի տիպ արձանացուցին :

4. Տեղի Ընդհանուր վարչութեան Միաբանութեանս լիցի Սուրբայա :

5. Անգամք վարչութեան կամ վարչական ժողովն կարեն փոփոխիլ միմիայն ի ժողովի Միաբանութեան մեծամասնութեամբ քուէից :

### ԺՈՂՈՎ

6. Անգամ մի առ ամիս, երկարագոյնն առ երկու ամիսս անգամ մի, պարտ է տեղական անդամոցն ի ժողով գումարիլ, ուր վարչական ժողովն ներկայացուցէ յառաջարկութիւնս վասն տեղեկութեան և վճռման ժողովոյն :

Թողեալ զայս, ի կարեւոր դէպս կարելի է արտասովոր ժողով գումարել :

Քարտուղարն պարտ է ի ժամանակին ծանուցումն չուրջ առաքել ի մասին ժողովոյն և նպատակին :

7. Ի վեց ամսոյ անգամ մի Ընդհանուր ժողով պարտ է լինիլ և այսու առթիւ արտասահմանի անգամք եւս յատկապէս հրաւիրեսցին :

Ի դէպս Նախագահի աններկայ լինելոյ՝ կարէ ժողովն ընտրել փոխանորդ մի վասն նոյն աւուր ժողովոյն :

8. Եթէ վեց անգամք գրութեամբ դիմեալ վարչութեան խնդրիցեն ժողով կոչել, պարտաւոր է վերջինս ի մէջ տասնեւչորս աւուրց կատարումն տալ խնդրանաց նոցա :

9. Քարտուղարն պարտի ճիշդ տեղեկագրութիւնս պահել զանցից ժողովոյն, կարգաւորեալ եղանակաւ ամփոփելով հետեւեալ ժողովոյն ներկայացուցանել յընթերցումն և ի հաւանութիւն :

Պարտ է նմա նաեւ հոգ տանիլ զի ցուցակ անգամոց ի կարգի լիցի միշտ :

Ի դէպս աններկայութեան Քարտուղարին՝ կարէ

Նախագահն փոխանորդ մի ընտրել ի վարչական ժողովոյն :

10. Ի Ժողովի՝ իւրաքանչիւր պաշտօ՛ական և խորհրդատու ունիցի մի առանձին քուէ որպէս որոք սոսկ անգամ :

Նախագահն ունիցի իրաւուն՝ ս տարոյ վերջնական քուէ մի :

Սովորական քուէն լիցի բարձրացուցանելով ըզ ձեռն : Իսկ եթէ հարկաւոր համարիցի, մարթ է քուէ արկութեան լինիլ ի վերայ քարտե՛ի :

Ժողովն պարտի յառաջն աւարտել զայն գործս և խնդիրս որոց ազագաւ գումարեալ է . յետ այնուրիկ կարեն անգամք յառաջարկութիւնս կամ խընդիրս յառաջ բերել , որք վիճաբանեացին կամ լուծցին ի սոյն կամ հետեւեալ ժողովի , որպէս որ մեծամասնութեամբ քուէից պատշաճ գատիցին :

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

11. Միաբանութեանս կարելի է մասնակցիլ (Ա.) Անդամակցութեամբ և (Բ.) Նուիրատուութեամբ :

12. Միաբանութեան՝ ս կարէ անդամակցութեամբ մասնակցիլ ամէն Հայ առանց խտրութեան թէ՛ կրօնի, թէ՛ սեռի և թէ՛ երկրի :

13. Յանգամ գրեալն պարտի նախ վճարել հիւնգ ճաւա գիլդերս վասն մտից (Entry-fee) , այնուհետեւ երկու և կէս ճաւա գիլդերս առ ամիսն՝ որ հաշուելի է ի սկզբանէ արձանագրեալ ամսոյն :

14. Իւրաքանչիւր անդամագրեալ անձն պարտի առնուազն վեց ամիս հաստատուն անգամ մնալ յետ արձանագրելոյ անուանն :

15. Միաբանութեանն անդամակցիլ կամեցողք պարտին զիմել վարչութեան որ զհարկաւորն կատարելոց է :

16. Միաբանութեանն կարէ որոք Հայ նուէր տալ զոր ինչ և յօժարի , թէ՛ զրամ , թէ՛ գրեան և թէ՛ ո՛րեւէ իր ի պիտառութիւն Միաբանութեան :

Յիշատակ նուիրատուաց արձանագրեսցի միշտ ի Տօմարի Միաբանութեանն :

17. Հարիւր ճաւա գիլդերաց և առաւել նուիրատուն արձանագրեսցի Պատուոյ ակնդաւ Միաբանութեանն :

Մարթ է հաւանութեամբ Ժողովոյն Պատուոյ ակնդաւ ընտրել նաեւ այնպիսի անձն կամ անձինս որոց գործ և նպատակ ազգօգուտ լիցի և ի նպաստ Միաբանութեանս յառաջիմութեան , եւս և ո՛րեւէ նշանաւոր անձն կամ անձինս որոց ընտրութիւն կարեւոր կամ պատշաճ գատիցի յօգուտ Միաբանութեանն :

### ԳԱՆՁԱՅԻՆ ՎԻՃԱԿ

18. Ի յամբողջ հասութից մտելոյ ի գանձարան Միաբանութեանն՝ 25 առհարիւր պարտի միշտ ի պահետի դնիլ յապահով զրամատան ուրեք : Ի պահես-

տի եղեալ գրամոյն չէ կարելի առնուլ որոք գումար առանց հաւանութեան մեծամասնութեան խողովոյ :

19. Յետ սովորական ծախսս առնելոյ՝ եթէ առ Գանձապահին առաւել գումար լինիցի քան 250 ճաւա գիլդերս , պարտ է առաքել ի գրամատուն ինչ՝ հաշուընթաց մի բանալով յանուն Միաբանութեանն . և ի դէպս կրկին հարկաւոր լինելոյ , պարտ է երեք անձանց , այսինքն՝ Նախագահի , Գանձապահի և ի միւս անդամոց վարչութեան միոյն ստորագրութեամբ ստացականաւ ստանալ :

### ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

20. Յընթերցասենեկի Միաբանութեան գտանիցին այնպիսի հայերէն նշանաւոր լրաթուղթք և գըրեան որպիսի վճռեսցին ի խողովի : Եւ առ այս նպատակ՝ առ ամն ոչ առաւել քան 200 ճաւա գիլդերս ծախսելի է :

21. Մէն մի անգամ ունի իրաւունս կարդալոյ զլրաթուղթս և զգրեան որք գտանիցին յընթերցասենեկին :

22. Լրաթուղթք և գրեան յետ ժամանելոյն մընան յընթերցասենեկի մինչեւ 20 օր . յետ այնորիկ կարէ ամենայն անգամ ի փոխ առնուլ առ ի կարգալ :

23. Գրութեամբ պարտ է դիմել Քարտուղարին վասն լրագիր և կամ գիրք ի փոխ առնլոյ , և մէն մի անգամ կարէ զ'ի փոխ առեալն լրագիրս մինչեւ 2 օր , իսկ զգրեան 8-10 օր պահել առ ինքեան :

Այլ սակայն եթէ վարչական խողովն յարմար և կարեւոր դատիցի , կարէ շրջեցուցանել զլրագիրսն ևայլն ի միոյ առ միւս անգամ կանոնաւոր յաջորդութեամբ : Եթէ վերջին եղանակ ի գործ դնիցի , յետ շրջանառութեան պարտին լրագիրք եւս ամիտփ պահիլ յընթերցասենեկին :

Եթէ որոք անգամ կործանիցէ կամ կորուսանիցէ թէ՛ լրաթուղթ ինչ և թէ՛ ո'եւէ իր , պարտաւ կան է զկրկնապատիկ գինն հատուցանել :

### ԼՈՒԾՈՒՄՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

24. Կարելի չէ Միաբանութեանն լուծանիլ քանի որ դեռ հինգ անգամք զոն Միաբանութեանն . ի նուազիլ այս թուոյ , եթէ կամիցին մնացեալ անգամք , մարթ է լուծանել զայն :

Իսկ զամենայն ստացուածս Միաբանութեանն , զհամագումար գրամոց թէ՛ որ պատրաստական և թէ՛ որ գոյանայցէ վաճառելով զամենայն ստացուածս Միաբանութեանն՝ պարտ է յանձնել « Հայկեան Միւսքաւորներու » Բատաւոյ այնու նպատակաւ՝ զի վերջինս երկու հաւասար բաժինս առնելով զայն՝ զմի կէսն նուիրիցէ առաջնակարգ Հայրենասիրական Միաբանութեան ժամանակին , որոյ նպատակն միեւնոյն է որպէս այս Միաբանութեան , այն է՝ Հայրենեաց և Ազգին ազատութիւն . իսկ գրամոց միւս կէսն մնայ նուէր Հայոց Սուրբ Կատարինն Օրիորդաց Դպրոցին , ի Նոր Զուգա :

**ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ**

25. Յայսմ կանոնադրութեան մարթ է որոք փոփոխութիւնս առնել, այլ մի միայն յԸնդհանուր Ժողովի Միաբանութեան. սակայն առանց շեղելոյ ի կէտ նպատակէն :

**Վարչական Ժողով**

«Հայոց Խրախուսական Միաբանութեան»

- |                  |                         |
|------------------|-------------------------|
| Նախագահ          | Մ. Տէր Գ. Ս. Նահապետեան |
| Քարտուղար        | Յ. Տէր Կ. Յորդանանեան   |
| Գանձապահ         | Սաւ Յովակիմ             |
| Խորհրդատու Անդամ | Գ. Խ. Թադդեանեան        |
| »                | »                       |
|                  | Յ. Գ. Տէր Կարապետեան    |

**Սուրբայա**


11 Յունուարի 1892 (Ն. Տ.)

Ծանօթ. — Նամակք վերաբերելի «Հ. Խ. Միաբանութեան» պարտին ուղղիլ Քարտուղարութեան հետեւեալ հասցէիւ .

**J. C. JORDAN ESQ.<sup>r</sup>**

Sourabaya (Java)

16



«Ազգային գրադարան»



NL0248779

